

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԳԵՈՐԳ ՍԿԵՒՈԱՑԻԻ ԳԱՆՁԵՐԸ

Մեր միջնադարեան Գանձասացներուն մէջ, իրենց դրած գանձերուն թիւով եւ որակով նշանաւոր անձերէն մին է Գէորգ Վրէ՛ Սկեււացի (չ. 1245-1301): Այդ գանձերուն մեծ մասը դրած է այս կամ այն անձին խնդրանքով: Բուրբին ալ անասկիզբի գերեւը կը յօդեն հեղինակին անունը, «Գէորգեա բան» ձեւով: Իր զբոլէն մեղի ծանօթ են ասաներկու գանձեր:

Դասաւորած ենք թիւ 2015 ձեռագրին համաձայն, որ կը պարունակէ ծանօթ ասաներկու գանձերէն ասան եւ մէկ հաւը:

Որդադիրները դրած ենք թ. 231 եւ թ. 1878 ձեռագրներուն համաձայն, ջանի որ անոնց մէջ կը անանուին գանձերը խնդրող անձերուն անունները:

1.— Գարագ Մննդի եւթն աւուրմ, ի խնդրայ Յովհաննու եկեղեցապանի.— Գերափայլ ճառագայթ, անմուտ արեգակն եւ ջահ անշիջանէի... — Ձեռ. Ս. Թ. Բ. 231, Թղ. 22: Թիւ 2015, էջ 32, ՎՁ. աւուրք:

2.— Գարագ Մննդի ութերորդ աւուրմ, ի խնդրայ ճորին Յովհաննու եկեղեցապանի.— Գերադոյն բնաւից անճառ էութիւն... — Ձեռ. Ս. Թ. Բ. 231, Թղ. 26: Թիւ 2015, էջ 41:

3.— Գարագ Նիկիոյ աւուրք ժողովոյն.— Գրեղին գովելոյ գումարեալ խմբին... — Ձեռ. Ս. Թ. Բ. 2015, էջ 86:

4.— Գարագ Սրբայն Թեղորոսի Ջաւալարին, Գեորգ Վարդապետի.— Գեղեցիկ վրկայ գիտուոր սքանչելի... — Ձեռ. Ս. Թ. Բ. 231, Թղ. 39: Թիւ 2015, էջ 96:

5.— Գարագ Սրբոց Թարգմանչացն,,

Գեորգեայ Վարդապետի.— Գեորգե Աստուծոյ ճոխ ի թեզ գնացիւ... — Ձեռ. Ս. Թ. Բ. 231, Թղ. 198: Թիւ 2015, էջ 239:

6.— Գարագ Սրբայն Գեորգեայ Ջաւալարի, ի խնդրայ Գորգոյ փիլիսոփայի, ի Գեորգեայ Վարդապետի.— Գլխոյն գաւրեղի ընտրեալ գաւրական... — Ձեռ. Ս. Թ. Բ. 1878, էջ 448: Թիւ 2015, էջ 368:

7.— Գարագ Վարագայ Սուրբ Խաչին, ի խնդրայ Տեառն Սիմէոնի Սկեւայ մեծի ուխտին առաջնորդի, ի Գեորգեայ Վարդապետի Լամպրունցոյ եւ Սկեւացոյ.— Գաւառն ուժոյ եւ ցուզ գաւրութեան... — Ձեռ. Ս. Թ. Բ. 1878, էջ 439: Թիւ 231, Թղ. 311: Թիւ 2015, էջ 377:

Այս քարոզը տպուած է Բազմավէպի մէջ, 1894ին (էջ 423-4), եւ վերագրուած Գէորգ Երզնկացիին: Մեր թ. 1878 ձեռագրին վկայութեան համաձայն որոյնպէս կը հաստատուի թէ քարոզին հեղինակն է Գէորգ Սկեւացին: Իսկ խնդրարկու Սիմէոնը՝ Սկեւայի ուխտին առաջնորդ՝ յիշուած է 1272 թուին, Ս. Աթոռոյս թ. 1654 ձեռագրին մէջ (էջ 163-4):

8.— Գարագ Սրբոց Աւետարանչացն.— Գեղապանն զարդիւք պանճուեալ... — Ձեռ. Ս. Թ. Բ. 231, Թղ. 314: Թիւ 2015, էջ 399:

9.— Գարագ Յովհաննու Ոսկեբերանի, առացեալ Գեորգ Վարդապետի, ի խնդրայ Հեթմոյ արեւայի Հայոց.— Գլով սքանչելի լոյս քում հանճարոյ... — Ձեռ. Ս. Թ. Բ. 231, Թղ. 338: Թիւ 2015, էջ 432:

10.— Գարագ Դաւթի Մարգարէին եւ

Յակովբայ Առաքելուն Նորին Գեորգա Վարդապետ(ի) ասացեալ.— Գերահաշտաւն խորհրդոյ դերականց դիտմամբ խաբարացեալ... — Զեռ. Ս. Յ. Թ. 2015, էջ 499:

11.— Գեորգա Վարդապետի Լամպրունցուն ոգեալ քարոյ Սրբոյն Բարսի, ի խնդրոյ քահանային Թորոսի.— Գոյիցըս ընաւից էից յոչէից... — Զեռ. Ս. Յ. Թ. 1878, էջ 419-420: Թիւ 2015, էջ 540:

12.— Քարոյ Սրբոյն Սարգսի Զարա-վարի, ի խնդրոյ սննդակցի եղբոր Սարգսի փիլիսոփայի, ի Գեորգայ Վարդապետէ ըԱկեւտացոյ.— Գրեւոցն ի յերկինս անդրանկաց դասուց... — Զեռ. Ս. Յ. Թ. 1878, էջ 429:

Այստեղ կ'արժէ անդրադառնալ նաեւ վերոյիշեալ Սարգիս փիլիսոփային: Սա թէորդ Սկեռացիի կողմէ կոչուած է «սնըն»

զակեց եղբայր», ուստի կրնանք ընդունիլ զինքը իբրեւ միաբան Սկեռացի ուխտին:

Այս Սարգիս փիլիսոփան, այսինքն երա-ժելաբ, իր կարդին Հեղինակ է երկու քա-րոյնեբու, որոնք են.

1.— Քարոյ Համբարձմանն Տնառն.— Սրբութիւն որբութեանց Աստուած անըս-կիողրն... Սա կը գտնուի Ս. Յակոբեանց Զեռագրատան Թ. 454 ձաւոցին մէջ, օրի-նակուած 1299-ին. Թիւ 271 ձաւոցին մէջ, օրինակուած 1316-ին. եւ Թիւ 231 Գանձ-դիրք-Տաղարանին մէջ, օրինակուած 1394-1415 թուականներուն միջեւ: Այս վերջինին համաձայն լոյս տեսած է Սիոնի մէջ 1950-ին (էջ 144):

2.— Քարոյ Յարութեան.— Սրբէական ձայնիւ նըսպեմք զերգս աւրհնութեան քեզ Տէր յարակայ... — Կը գտնուի Ս. Յա-կոբեանց Թ. 231 Գանձարանին մէջ (Թղ. 125), եւ նոյնպէս լոյս տեսած է, 1950-ին, Սիոն առաքելին մէջ (էջ 186-8):

Ն. ԵՊՍ. ՇՈՎԱԿԱՆ



190-98